





<p>Զինանշան</p>	<div style="display: flex; justify-content: space-around; align-items: center;"> <div style="text-align: center;">  <p>1843թ.</p> </div> <div style="text-align: center;">  <p>2006թ.</p> </div> </div>
<p>Վարչական կառավարում</p>	<p>ԼՂՀ Շուշիի շրջանի կենտրոն, ներառյալ շրջակա գյուղերը (Լիսագոր, Քարին Տակ, Հին Շեն, Մեծ Շեն) մոտ 5,000 մարդ ընդհանուր բնակչությամբ: Քաղաքում տեղավորված է շրջանի վարչությունը:</p>
<p>Կարգավիճակ</p>	<p>Պատմաճարտարապետական արգելոց: Քաղաքի կանոնադրությունը հաստատված է 2007թ.:</p>
<p>Տարածքը, աշխարհագրությունն ու կլիման</p>	<div style="display: flex;"> <div style="flex: 1;"> <p>600 հեկտար տարածք: Քաղաքի մակերեսը՝ 350 հեկտար:</p> <p>Դիրքը Գորիս-Լաչին-Ստեփանակերտ մայրուղու վրա, Ստեփանակերտից 10կմ հարավ: Գտնվում է Ստեփանակերտից վերև ընկած ռազմավարական բարձրության վրա:</p> <p>Ամենաբարձր կետը ծովի մակերևույթից 1,600մ է, իսկ ամենացածրը 1,300մ:</p> </div> <div style="flex: 1;">  </div> </div>
<p>Տիզիկական բնութագիր</p>	<div style="display: flex;"> <div style="flex: 1;"> <p>Բերդաքաղաք՝ շրջապատված 18-րդ դարի բերդապարիսպով և Ջդրդուզի գետահովտով:</p> <p>Ավանդաբար բաժանված է 12 թաղամասերի, ներառյալ հյուսիսային թաթարականը: Քաղաքի հայկական հատվածի մեծ մասը ոչնչացվել է 1920թ. կոտորածի և 1970-ական թթ. խորհրդային շրջանի քաղաքաշինության ընթացքում:</p> </div> <div style="flex: 1;">  </div> </div>

<p>Տրանսպորտ և կապ</p>	<p>Շուշին հեշտ հասանելի է, քանի որ գտնվում է ՀՀ ԼՂՀ-ին կապող գլխավոր մայրուղու վրա: Ճանապարհն ամբողջովին վերանորոգված է և պահվում է լավ վիճակում: Երևանից Շուշի երթն ավտոմեքենայով տևում է 5 ժամ:</p> <p>ՀՀ և ԼՂՀ միջև օդային հաղորդակցությունը նախատեսվում է վերականգնել 2008թ.: Արդյունքում Երևանից Շուշի երթևեկությունը Ստեփանակերտի օդանավակայանի միջոցով կտևի ընդհանուր առմամբ 1 ժամից ոչ ավել:</p> <p>Հաստատված է Շուշի-Ստեփանակերտ կանոնավոր տրանսպորտային երթուղի, շրջակա գյուղերի բնակչության համար գործում է ավտոբուսային գիծ:</p> <p>Տեղական հեռախոսակապը թվայնացված է, գործում է բջջային հեռախոսակապ, համապատասխանաբար, ռոումինգի ծառայություն և ինտերնետ կապ:</p> 
<p>Բնակչություն, աշխատուժ, տեղաշարժ և բնակեցում</p>	<p>Ժամանակին Շուշիի բնակչությունը հասել էր գագաթնակետի՝ 40,000 մարդ (50%-ից ավելին հայեր էին): 1920թ. զանգվածային կոտորածից և էթնիկ զտումներից հետո հայազգի բնակչությունը լքեց Շուշին: 1920-1922թթ. ադրբեջանական վարչական ղեկավարության ժամանակահատվածում քաղաքի հայկական համայնքի թվաքանակը կրճատվեց մինչև ընդհանուր բնակչության 2%-ը: Ազատագրումից հետո Շուշին աստիճանաբար բնակեցվում էր հիմնականում Հայաստանից տեղափոխվածներով և փախստականներով Ադրբեջանից և ԼՂՀ բռնագրավված շրջաններից:</p> <p>Մշտական բնակչության ընթացիկ թիվը կազմում է 3,000-ից ավելի բնակիչ: Տեղի աշխատուժը համեմատաբար որակավորված չէ, չնայած Ստեփանակերտում (10կմ) և Հայաստանի արևելյան շրջաններում (70կմ) կա որակավորված աշխատուժի անհրաժեշտ քանակություն:</p> <p>Շուշիի զարգացման միջնաժամկետ նախագիծը նախատեսում է, որ քաղաքի բնակչության թիվը 2020թ. հասնելու է 12-15,000-ի:</p>
<p>Ենթակառուցվածք</p>	<p>Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգը ամբողջովին վերականգնված է և համապատասխանում է շինարարական և արտադրական պահանջներին:</p> <p>Ճանապարհային ենթակառուցվածքի 80%-ը վատ վիճակում է և կարիք ունի անհապաղ վերակառուցման: Մի քանի կենտրոնական փողոցներ ամբողջովին վերանորոգված են:</p> <p>Ջրամատակարարման/կոյուղու համակարգը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Քաղաքում ջրամատակարարման նոր ցանցի կառուցման նախագիծ կա:</p>

<p>Գլխավոր հատակագիծ</p>	<p>1998թ. Գլխավոր հատակագիծը նորացվել է 2007թ. և համապատասխանեցվել Շուշիի համալիր զարգացման նոր պահանջներին: Նոր գլխավոր հատակագիծը մշակվել է ԱՄՆ-ում գործող «ՄԵՄԱ Ասոշիեյթս» ճարտարապետական ընկերության կողմից «Շուշի վերածնունդ» հիմնադրամի համար:</p> 
<p>Բնակելի ֆոնդ</p>	<p>450 տներ և 800 բնակարաններ՝ մեծավ մասամբ բաշխված, բայց միայն մասամբ են բնակեցված, բնակելի ֆոնդի 60%-ը զբաղեցված է մշտական բնակիչների կողմից: Շուշիում բնակություն հաստատել ցանկացողներին անվճար հատկացվում են տներ և բնակարաններ դրանք հիմնովին վերանորոգելու և տարվա մեջ ամենաքիչը 150 օր դրանցում ապրելու պայմանով:</p> <p>Բնակելի մեծաքանակ միավորների, այդ թվում և պատմական կառույցների ենթակառուցվածքին զգալի վնաս է հասցված, և դրանք դատարկ են: Մասամբ քանդված և կամ խարխիլված տների մեծ մասը կարող են վերանորոգվել և բնակեցվել:</p> 
<p>Մշակույթ</p>	<p>19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայկական մշակութային կենտրոններից մեկն էր. ուներ թատրոններ, դպրոցներ, վարժարաններ, ուսումնարան, տպագրական գործ՝ ներառյալ 20 թերթ, քաղաքական կուսակցություններ, թանգարաններ, զարգանում էր ճարտարապետությունը: Շատ գրողների, դերասանների, զորահրամանատարների, քաղաքական գործիչների (Լեո, Մուրացան, Արամ Մանուկյան և այլն) հարազատ քաղաքն է եղել:</p> 

<p>Ճարտարապետություն</p>	<p>Միակ պահպանված հայկական բերդաքաղաքն է՝ կառուցված 18-19-րդ դդ. ճարտարապետական և քաղաքաշինության ոճով: Հայկական, իրանական և խորհրդային ոճերի համադրություն: Շինությունների մեծամասնությունն ավերված է. մոտ 200 հին շինություններ, բնակելի տներ, դպրոցներ, հիվանդանոցներ, պատմական գերեզմանատներ, ամրություններ, մզկիթներ, գրադարաններ, բաղնիքներ և այլն պահպանվել են, շատերը կարիք ունեն անհապաղ վերականգնման:</p> 
<p>Եկեղեցիներ</p>	<p>Շուշիի պատմական 7 Եկեղեցիներից միայն 2-ն են փրկվել աղբբեջանական վայրագությունից և խորհրդային ժամանակաշրջանի քաղաքաշինությունից:</p>   <p>Ամենափրկիչ Ղազանչեցոց Եկեղեցի Հովհաննես Մկրտիչ Եկեղեցի (Կանաչ Ժամ)</p>
<p>Մզկիթներ</p>	<p>Շուշիում կա երեք մզկիթ: Վնասվել են 1992թ. քաղաքի ազատագրման ընթացքում. ներկայումս դրանք վերականգնվում և պահպանվում են:</p> 
<p>Արհեստներ</p> <p><i>Շուշիի մետաքսյա գորգ՝ տեղական բնորոշ նախշերով</i></p>	<p>Ավանդական արհեստների կենտրոն, ներառյալ մետաքսյա կտորների մշակում, ոսկերչություն, փայտամշակում, կավագործություն, ժանյակագործություն, կաշվեգործություն և այլն:</p> 

<p>Տնտեսություն</p>	<p>Վերջին տարիներին ԼՂՀ տնտեսությունը զգալիորեն ընդարձակվել է հանրային և մասնավոր շոշափելի ներդրումների հաշվին: Շինարարությունը, սննդի արտադրությունը և ծառայությունների ոլորտը բուռն կերպով զարգանում են: ԼՂՀ զբոսաշրջությունը նույնպես զարգանում է Հայաստանից և արտերկրից զբոսաշրջիկների աճող հոսքի արդյունքում, որոնց մատուցվում են բազմաթիվ ծառայություններ, կառուցվում են հյուրանոցներ: Բարենպաստ ներդրումային մթնոլորտը, ցածր հարկերը, կայացած բանկային համակարգը, կայուն արժույթը և բյուրոկրատական խոչընդոտների նվազումը նպաստում են նոր ներդրողների առաջացմանը:</p> <p>Նման քաղաքականության արդյունքում նկատվում է արտերկրյա ներդրումների հոսք Ռուսաստանից, Լիբանանից, Շվեյցարիայից, Կանադայից, Բելգիայից, Ավստրալիայից և այլ երկրներից:</p>
<p>Ներդրումային խթաններ</p>	<p>Ընդհանուր առմամբ ներդրումային մթնոլորտը ԼՂՀ-ում բավական բարենպաստ է: Ներդրողներին տրամադրվող հարկային արտոնությունները կրում են սպառիչ և ճկուն բնույթ, ի լրումն ընդհանուր բարեխառն ֆիսկալ քաղաքականությանը կան լրացուցիչ շոշափելի խթաններ նրանց համար, ովքեր ցանկանում են ներդրումներ կատարել Շուշիում: Բացառությամբ ծառայությունների և մանրածախ առևտրի ոլորտի, մնացած բոլոր ներդրումները Շուշիում ազատվում են ԱԱՀ-ից և եկամտահարկից 10 տարվա ընթացքում: Այստեղ մտնում է անշարժ գույքն ու շինարարությունը, արդյունաբերությունն ու սննդի արտադրությունը և այլն: Ներդրողներին նաև տրամադրվում են երկարաժամկետ արտոնություններ սեփականության հարկի համար:</p> <p>Պատմական շինությունները որպես սեփականություն ձեռքբերել ցանկացող ներդրողներին կտրվի սեփականության իրավունք քաղաքի Գլխավոր հատակագծի համաձայն դրանք վերականգնելու և օգտագործելու պարտավորությունների դիմաց: Գնորդը պետք է միայն սիմվոլիկ գումար մուծի գրանցման և կադաստրային ծառայությունների դիմաց:</p>
<p>Բանկային սեկտոր</p>	<p>ԼՂՀ բանկային սեկտորը զգալիորեն ընդլայնվում է Ստեփանակերտում և շրջաններում բացվող ինչպես տեղական, այնպես էլ հայաստանյան բանկերի մասնաճյուղերի հաշվին: Հայաստանյան խոշոր բանկերը՝ “Արդշինինվեստբանկը”, “Կոնվերս բանկը”, “Արարատ բանկը”, “ԱԱԲ”, “Յունիբանկը” և այլն, ինչպես նաև տեղական “Արցախբանկը” իրենց ներկայացուցչություններն են բացել ԼՂՀ-ում և տրամադրում են բանկային ծառայություններ, ներառյալ բիզնեսի, գյուղատնտեսության և հիփոթեքային վարկավորումը: Դրամական փոխանցումները պարզեցված են, կապիտալի հոսքի և ռեպատրիացիայի սահմանափակումներ չկան:</p>
<p>Շուշիի համեմատական առավելությունները</p>	<p>Զբոսաշրջության գլխավոր նշանակետ, տարեկան 50 հազար հանգստացողներով առողջարան: Մաքուր, խոնավ լեռնային օդը հանքային և կազդուրիչ ջրերի հետ համադրությամբ Շուշին դարձնում են շնչառական և այլ հիվանդությունների բուժման կատարյալ վայր, առաջնակարգ վայր քեմիինգի համար: Ընդհուպ մինչև 1980-ականների կեսը Շուշին ուներ 12 առողջարան:</p>

“ՇՈՒՇԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ” ՀԻՄՆԱԴՐԱՄ

<p>Նպատակներ</p>	<p>Վերականգնել քաղաքը որպես՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Համահայկական մշակութային կենտրոն ▪ Հայաստանի և Սփյուռքի համալսարանական և կրթական կենտրոն ▪ Զբոսաշրջության արգելոց՝ արհեստի և արվեստի կենտրոն ▪ Համահայկական նախաձեռնությունների մշտական ֆորում-կենտրոն
<p>Միջոցներ</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Հանրային և մասնավոր կորպորացիաներ, ներդրումային կոնսորցիումներ ▪ Հարկային արտոնություններ ներդրողների և տեղի բնակիչների համար ▪ Շուշիի գլխավոր հատակագիծ ▪ Մշակութային ժառանգության պահպանում ▪ Համազգային մշակութային միջոցառումներ ▪ Շուշիի ավանդույթների, արհեստների, խոհանոցի և այլնի վերականգնում ▪ Նվիրատվություններ նպատակային դրամահավաքի միջոցով ▪ Միկրովարկավորում և դասընթացներ Շուշիի բնակչության համար ▪ Համահայկական դրամահավաք
<p>Հոգաբարձուների խորհուրդ</p> <p>Երվանդ Զախարյան՝ նախագահ Նավասարդ Արք. Կճոյան Պարզև Արք. Մարտիրոսյան Ֆլորա Նախշբարյան Հարություն Խաչատրյան Հարություն Արմենյան Արամ Սիմոնյան Հիլդա Զոբոյան Սոս Սարգսյան Լևոն Անանյան Մկրտիչ Մինասյան Սեդա Յաղոբյան Վարդգես Արծրունի Զորի Բալայան Գագիկ Գալստյան Արտեմ Սարգսյան Կարեն Դավթյան</p>	

<p>Գործադիր կառույց</p> 	<p>Գործադիր տնօրեն Գրիգոր Հովհաննիսյան + 374 91 43 88 42 grigor.hovhannisyan@shushi.org</p> <p>Հանրային կապեր Մարինա Գրիգորյան +374 91 54 50 77 marina.grigoryan@shushi.org</p> <p>Երևան 0015, Արգիշտի 1, սենյակ 306 + 374 10 56 14 86 shushi@shushi.org www.shushi.org</p>
<p>Շուշիի վերածննդի միջանաժամկետ ծրագիր</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ներդնել և կիրառել քաղաքի կառուցապատման նոր կանոնակարգ՝ համաձայն Շուշիի նոր գլխավոր հատակագծի 2. Հիմնովին լուծել քաղաքի ջրամատակարարման և կոյուղու խնդիրները 3. Ներգրավել ներդրողներ և սկսել պատմական շինությունների ու թաղամասերի ռեսուրսն օգտագործող ներդրումային ծրագրեր՝ հիմնականում Զբոսաշրջության, առողջարանային, համագումարների և Կրթական թաղամասերում 4. Ներգրավել հայաստանյան և սփյուռքի ներդրողներ Շուշիում փոքր և միջին բիզնեսների (սպասարկում և արհեստագործություն) հիմնադրման համար 5. Ավարտել Զրաբերդի հրապարակի կառուցումն ու կառուցապատումը 6. Լիովին վերանորոգել և բարեկարգել Շուշիի բերդապարիսպը և վերակառուցել Շուշիի Երևանյան դարպասը 7. Շուշիում հիմնադրել հանրապետական նշանակության գեղարվեստի ակադեմիա և այն տեղակայել Արամյան վարժարանի պատմական շենքում 8. Պատրաստել Սուրբ Աստվածածին Մեղրեցոց Եկեղեցու ռեկոնստրուկցիայի նախագիծը միջազգային մրցույթի միջոցով 9. Նախագծել պատմամշակութային 14 շինությունների/հուշարձանների և թաղամասերի վերակառուցման աշխատանքները 10. Նախագծել քաղաքի հեռանկարային նոր թաղամասը հետագա կառուցապատման համար 11. Բարելավել քաղաքի ճանապարհային ենթակառուցվածքը շինարարական ավանդական տեխնոլոգիաների կիրառմամբ 12. Շուշիում հիմնադրել շինանյութի արտադրական հզորություն